


THE DICKRIS PUBLISHING CO. 628 Third Avenue, NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆՆԱԿՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՁՅԵՒ:

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՔԱԿԱՆ

Ս. ՏԱՐԻ, ԹԻՒ 13

ՆԻՒ ԵՈՐՔ, ՓԵՏՐՎԱՐ 5, 1898

ԳԻՆ 3 ՍԵՆԹ

ՆԱՄԱԿ Կ ՊՕԼՍԷՆ

Յուն. 12, 98.

Սբ. Համիտի ծննդեան 56րդ տոնավաճառի շնորհիվ...

Պատիկ առաջարկություն մը ունիմ Օրմանեան Պատրիարքին...

Սուրբի մը սոնամարտի թեմէն ինչ տարբերութիւն ունի այն բարեմաղթութեան հանդէսներն...

Յուն և Թրքական դաշնագիրը վերջապէս ստորագրուեցաւ երկու կողմէն...

Յունաստանի հաշտութեան գիրն կ'ըսեն թէ շատ պարզ թուղթի մը վրայ գրուած է...

կը խօսուի թէ, գունատեր է բարկուեթեանն, տեսնելով Պարզ թուղթի մը կտորը...

Երանի՛ թէ Օսմ. ոսկեգօծ շողջողուն հաշտութեան գիրը Յունաց կառավարութիւնը փոխանակ իւր արտաքին գործերու նախարարութեան ղեկնաստունը պահելու, Աթէնքի համբաւաւոր թանգարանը սպակիի մը մէջ իցոյց դնէր Հելլեն հասարակութեան, որ փոխարէն իւր անհամար դաւակնելու թափած արիւնին, ամայացած զիւրերու ծանրագին զոհողութիւններու միայն այս ոսկեգօծ, զարդարուն «թուղթի կտոր»ը չափեցաւ:

Պատրիարքարանի գործերուն տեղեակ բարեկամ մը առջի օր կըսէր թէ ոչ մէկ պատրիարքութեան օրով, իրիմեանիսն ալ մէկտեղ սեպելով, Ազգ. Պատրիարքարանն այսքան բազմաթիւ նամակներ տեղացած ըլլան գաւառներէն. շարժուս մէջ օր մը 138 նամակներ կ'եկած են գաւառներէն. նամակներու բոլորին պարտանակութիւնը քանի մը սխալ և ահաւոր իրողութիւններու մէջ կամփոփուին. բոլորն ալ կը պատմեն թէ ձմեռուան մէջ հայ զիւղացիները ու քաղաքացիները անպատասխարան, ահօթի ու անզոր՝ կը դիմեն գաւառական առաջնորդներուն, որոնք իրենց կողմէն այս թշուառներուն ցաւերը կը պարզեն Օրմանեան Պատրիարքին: Ամենէն ողբերգական սըրտածովի նամակը, ձեռքերը կը համբուրեմ'ով ու կըսէ թէ զէնկին ծընողքս, քոյրերս ու եղբայրներս մէկ թագգէի մէջ մորթուած ըլլալով, երբ ես շատ պզտիկ էի, Աստուծո՛մէ գատ մէկը չունիմ ինձ պաշտպան» ու նորէն Սրբազանին ձեռքերը համբուրելով կըսէ թէ պիտի սպաննէ ինքզինքը եթէ Սրբազանը անմիջապէս զինքը չը տանի Սթամպոլ, ու զնէ վարժարան մը: Ս. Պատրիարքը այս օրեր ընդհանրապէս գրադարած է այս նամակներու միջոցին պատասխանելու մեծ գործով, բայց ոչ մէկ պահանջքի դրական օգուտ մը ցոյց չը արուի: Պատրիարքական նամակները ընդհանրապէս կըսկսին այսինչ թիւ կողմ նամակին հասած ըլլալը ծանուցանելով, և կը վերջանան հրաւիրելով նամակագիր առաջնորդներն ու ժողովուրդը իրեն հետ սպասեն ու ներկային մէջ իրեն ձայնակցին Համիտին արեւատութեան հանգերգը երգելով:

Նակցին Համիտին արեւատութեան հանգերգը երգելով:

Ամեն. Ալէքսիսեան Սրբազանը, Շարաթ օր Պատրիարքի տունը գընաց և իւր շարաթ մը առաջ եպարքոսին ըրած սպանակիքը ըրաւ Ս. Պատրիարքին. կամ կ'ըլիկոյ կուզէ երթալ Սրբազանը իւր կաթողիկոս, և կամ կ'ուզէ քաշուիլ Երուսաղէմ իւր կամաւոր աքսորեալ մը, Օրմանեան Սրբազան խօսք տուած է թէ առաջին պատահութեամբ պիտի խօսի հարկ եղած տեղը իւրմասին: ԱՐԱՍ

ՄԵՇ ԳՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԸ

Բիւզանդիոն վերապահութեամբ կը հրատարակէ Դարէթէ իրեն զըրկուած նամակ մը, որ կը յայտնէ թէ հանգուցեալ Գէորգ կաթողիկոսի ինչպաս Գէորգեան ճեմարանի կտակած 200,000 բուլլին, Ս. Էմիմանի գանձարանէն գողցուել է հետեւեալ պարագաներուն մէջ:

Գանձարանը երկու բանակի ունի. մէկը կաթողիկոսին քով կը գտնուի, իսկ միւսը՝ գանձապետին քով: Կաթողիկոսի ազգական Պ. Որէն Ուրիմեան անոր վստահութիւնը գրաւած ըլլալով, կը յաջողի ձեռք անցունել բանակին, և գանձապահ վահարը կանխելու թացնէն դրամը:

Սինոդին Բրոկուրորը իմանալով քննութիւն կը բանայ, ու կարգ մը ձեռքադրութիւններ կ'ըլլան: Թըղթակցի ըսածին նայելով, Պ. Որէն Թիֆլիզ կը զրկուի հսկողութեան տակ. վահան և նահապետ վարդապետներն այլ և այլ կողմեր կ'աքսորուին:

Վերջի պահուս Պօլէն առնուած Բիւզանդիոններն կը հերքեն այս լուր, իսկ Ռուսահայ յարգիրներն բողոքով լուռ են այս մասին: Կը կարծուի թէ Հայ մամուլը ճշման տակ, ստիպուած է լռել այս խնդրոյ մէջ ևս, որ բողոքովին անհիմն գրաբարութիւն մը չի կրնար ըլլալ:

Պ Ա Տ Ա Ս Ս Ա Ն

Պոսթոն, Յունվար 24 Գրովիտէնան թ. Ճալալեան ըստորագրութեամբ «բողոք մը» խիստ բառերով կը քննադատէ ՏԻԳՐԻՍԻ 10րդ թուոյն քաղաքական տեսութեան մէջ երեցած պարբերութիւն մը որ Հայ յեղափոխութեան կը վերաբերէր: Տարակոյս չկայ թէ բողոքագիրը իւր տեսութիւնները կամ կարծիքները յայտնելու այնքան իրաւունք ունի «սիւնակները ժողովըրդին առջև բաց» ազատ թերթի մը մէջ որչափ անկարկեալ քաղաքական

տեսութեան հեղինակը: Ազատ քըննադատութիւնը ազատ երկրի մէջ ամէն անհատի անբռնարարելի իրաւունքն է:

Բայց դիւրին չէ հասկնալ թէ բողոքագիրը ինչ ըսել կուզէ երբ խօսքը Սմբագրին ուղղելով պատգամ կորոտայ «—Ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ որ այսպիսի գրիչներու աշակերտը հսկէք», և կարծես շեշտելու համար իր հրամանը, կը խնդրէ որ «այդպիսի գաղափարներու տեղի չտաք»:

Բռնութեան դէմ կուռղ, խօսքի և խղճի ազատութեան արտայայտանքը, գրաքննութեան ատե՛ան մը կուզեն հաստատել արտասահմանի Հայ մամուլոյն վրայ:

Հայ ժողովուրդը Նազարպէկներու պէտք չունի:

Այս առթիւ թոյլ տրուի ինձ խնդրել Պոսթոնի թղթակից Պ. Աշոտէն որ իր ուր չտանջէ իւր խիղճը Կ. Յ. Փ. ի Հոգաբարձութեան անդամ ընտրուելուն մէջ բարոյական սկզբունքի մը բռնարարութիւն տեսնելով: Կ. Յ. Փ. ի տեսութիւններն՝ Ազգ. Եկեղեցւոյ կատարած պատմական դերին և միսիոնարական պառակտումներուն՝ ժամանակին Պօսթոնի մամուլոյն մէջ հրատարակուած ըլլալով՝ տեղուոյ Հայ ժողովուրդին ծանօթ է: Կրօնական ժողովոյն իր անձին վրայ տածած վստահութիւնը գնահատելով հանդերձ՝ Կ. Յ. Փ. իր կրօնական համոզումներուն տեսակէտէն անկեղծութեան պարտք համարած է առաջին օրէն հրաժարիլ Հոգաբարձութեան անդամակցութենէն: Եթէ Պ. Աշոտ ճշմարտութեան սիրոյն համար քիչ մը ձանձրոյթ յանձն առնելով ստուգէր այս իրողութիւնը, լրջամիտ թղթակցի մը պաշտօնը աւելի խղճատօրէն կատարած պիտի լինէր, և «սկզբունք» ու «կեղծաւոր» բառերն ալ այնչափ անգըթօրէն չպիտի շարժարէր:

Կ. Յ. ՓԱՓԱՁԵԱՆ

Այս նամակ հրատարակելով գոհացում տուած կըլլանք նաև այն ամէն նամակագիրներուն որք նոյն նիւթերու վրայ գրած են մեզ վերջերս: Միևնոյն ժամանակ փակուած կը նկատենք այս միջադէպներ որք ասկէ աւելի վիճարանութեան կարելի չէ ենթարկել: Ման. Սմբ.

ԱՁԴ

Գէորգ Պարսամեան անուն անձը, որ Սարբերդ Բօլէճի ընթացաւարս մէ, կը փնտռուի իր մէկ բարեկամէն: Անոր ուր ըլլալը գիտցողներն թող հաճին գրել Լրագրոյս Սմբագրութեան:



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,

ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.

ԲԱՅԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	ՏՂ. ՍԹ.	Տարեկան	10 Փրանք.
Վեցամսեայ	1 50	Բաժանորդագրինն ԿԱՆՈՒԿ	
Յոսամսեայ	75	Վճարելի է միշտ:	

Մտար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝
To the DICKRIS PUBLISHING CO., 638 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐՔ, ՇԱՐԱԹ, ՓԵՏՐՎԱՐ 5 1898.

ՀԱՅ ԱՆԳՈՐԾՆԵՐՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՈՒԹԵԱՆ ԽՆԳԻՐ

Բաղադրուի մէջ, ինչպէս նաև ուրիշ Հայաստանի գիւղեր Հայ անգործներու թիւը բաղադրատար փոքր է այժմ, բայց այսու հանգերձ Հայոց ճաշարաններու մէջ, որք անգործներու ուխտատէրներն զարձած են, կարելի է միշտ գտնել գործի կարօտ շատ մը ազգայիններ, որք հոյ դադարեալներ թիւնէն աճապարհներն մը ակնկալելու իրաւունքն ունին: Որքերուն համար ողի իրեն աշխատելու, ազգային այլ և այլ ընկերութիւններ կազմելն և այլ բարենպաստ կատարողութեանց համար ջանալն ոչ ոք կ'ուրանայ թէ կարող գործեր են, բայց այսու հանգերձ այս անգործները մոռնալը չի կրնար արդարանալ ո՛ր և է պարագայի տակ: Այս անգործն ազգային ու լեզուաբաններն ալ Հայ է, որոց ողբալի վիճակն խորին ուշադրութեան արժանի իրենք մը կատարել կարող ու գործող գաղտնաբերին համար: Աղագային և Բարեգործական շատ մը ընկերութիւններ կազմուած են այս քաղաքին մէջ, բայց դեռ մէկ անգործ իսկ գործի չառաջնորդուեցաւ այս բարեգործ ընկերութեանց կողմէ: Ազգասիրութիւնը լոկ ընկերութեանց կազմուելու մէջ չի կայանար: Հայ գաղթականութեան, որ օրէ օր նշանակութիւն կատանայ Ամերիկայի մէջ, պատուաբեր է այս սարտամ կացութիւնը: Գէթ Հրեայներէն դաս առնենք այս մասին: Ոմանք կը կարծեն թէ մեր անգործները գործի առաջնորդելու համար դրամ կը պահի մեր մէջ, բայց ճշմարտութիւնն սա է թէ կամքի է որ կը կարօտային այս մասին:

Անգործները գործի առաջնորդելու թէև կան շատ մը կերպեր, բայց լուսազոյնն ու ամենազիւրիկն է քաղաքական նշանակութիւն մ'ու գիրք մը բռնել հրատարակի վրայ: Երբ ընտրութիւններն կը մօտենան, ընդհանրապէս քանի մը սկար ցոյցեր կ'ըլլան մեր կողմէ, բայց ընտրութեան վերջ ոչ ոք կը մտածէ մնայուն կազմակերպութիւն մը ունենալը որով միայն կարելի է գիրք մը ձեռք բերել: Մեր բոլոր անգործներուն կարելի պիտի ըլլար շատ դիւրութեամբ քաղաքային այլեայլ գործոց մէջ զբաղուելու գտնել, եթէ քանի մը հարիւր քուէ ունենող ակումբի մը կողմէ խնդիր մը մատուցուէր քաղաքային վարչութեանց: Նիւ Եորքի մէջ ունինք այժմ առնուազն 350 քաղաքացի ստանք իրենց քաղաքացիութեան բոլոր պարտքերը կը կատարեն, բայց զարմանալի է որ իրենց իրաւունքներն վայելելու մէջ կը թերանան անտարբեր. բուն մը որ նորութիւն կրնայ սեպուել մեր մէջ:

Բայց քաղաքական կազմակերպութեան օգուտը՝ անգործին գործ գտնել չէ միայն: Բանի մը հարիւր քուէներ ունենող ակումբի մը ձայնն Ամերիկայի մէջ շատ հետուները կրնայ հասնիլ . . . : Հայ քաղաքացիներն՝ գէթ իբր ազգային պարտականութիւն՝ պէտք է որ քաղաքական կազմակերպութիւն մը ունենան, ազգային. բնկերական, Նիւթական և բարոյական շատ մը օգուտներ կրնան յառաջ գալ անկէ, մինչ անտարբեր ու կղզիացեալ մնալը՝ վնասէ գառ ուրիշ սինչ կրնայ արտադրել: Ազատ լրարաններու մէջ, յուզելու ամենաօգտակար խնդիր մը կրնայ ըլլալ այս հարց, և գուցէ յարմարագոյն վայր է այն այսպիսի կազմակերպութեան մը խանձարուրը բանալու համար:

Քաղաքացի ըլլանք, ու քաղաքական կազմակերպութեամբ գիրք մը բռնենք քաղաքական հրատարակի վրայ, եթէ ոչ ուրիշ, գէթ մեր անգործներն ազատելու փրկելու համար անօթութեան ճիրաններէն:

Պարկաստանի մէջ խռովութիւնը օրէ օր կը մեծնայ Ռուսիոյ դրամամբ: Կ'ըսուի թէ Պարկաստանը Ռուսիոյ շահուն համար կաշխատին: Անցեալներն Անգլիական մարտանաւերն Բրիտանական դրօշի դակ շողենաւ մը բռնացին. որ գէնք կը փոխադրէր Պարկաստան: Լծնտանի Պարկաստանի գեասանը Անգլիայի վաճառականաց այս ընթացքին գէմ բողոքեց. և կ'ըսուի թէ տարիէ մ'աւելի է որ այս կերպով գէնք կը զրկուի Պարկաստան:

Մեծ գարմանքով իմացանք անցեալ ետկուշարթի թէ Սէյֆուլլահ փաշա երկու հազար զօրքով և երկու թնթանօքով Դրազալայի մօտ, Լազարիա գիւղը գնացեր է տուրք հաւաքելու համար: Գիւղին բնակիչներն յարձակած են զօրքերուն վրայ ու կանոնաւոր կռիւ մը սկսած է, որ տեւած է մինչև երեկոյ: Երկրորդ օրը՝ կռիւը շարունակած է նորէն, և չի փոքուիլ թէ ի՞նչ եղած է արդիւնքը:

Մուլթանը շարթուս մէջ Չարին հեռագիր ըրաւ, խնդրելով որ ձեռնպահ մնայ Գէորգ իշխանի կրէտէի կառավարիչ կարգուելու խնդրոյն մէջ: Չարը փոխանակ առանձին պատասխան մը տալու, իր Պոստի գեասանին միջոցաւ պատասխանադիր զրկեց թէ իրաւիկային խնդիրն չի կրնար ընդունուիլ և թէ Գէորգ իշխան անպատճառ կառավարիչ կարգուելու է կրէտէի: Այս պատասխանադրին լեզուն այնչափ զօրաւոր է եղեր որ գեասանն զայն ներկայացնելէ առաջ՝ հրահանգ խնդրած է փեթրպուրկէն:

Պոստի Պուլկարական գործակալը ծանուցագիր մը տուաւ Դրան, որով ուշադրութիւն կը հրաւիրէ Ուսուպ նահանգի մէջ տեղի ունեցած զժուարտութեանց վրայ ուր 592 պուլկարներ բանտարկուած են գէնք ամբարած ըլլալու ամբաստանութեամբ: Գործակատարը կը պնդէ թէ ձեռքաւորուածներէն շատերը սանջանաց ենթարկուած են, ու կիներ ու աղջիկներ բռնաբարուած՝ մահամեծ վիճակի մէջ կը գտնուին: Ուստի կը պահանջէ որ այս բռնութիւնները անմիջապէս դադարին. ձեռքաւորուածները իւրաքանչիւր զրկուին գատուելու համար: Ծանուցագիրը մեծ մտանդութիւն կը պատճառէ պալատական և նախարարական շըլանակներու մէջ:

Ալճէրի մէջ ժողովուրդը շատ մը Հրէայներու տնտեսութիւնն ու խանութներուն վրայ յարձակուեցաւ: Գէորգ այն է որ այս շարժումներուն գաւառներն ալ սկսեցին մասնակցել, և երբ գաւառներն այսպիսի շարժմանց կը մասնակցին, արմատական յիպոփոթութիւն մը անտարաբար կը գաւառայ: 1830ի և 48ի դէպքերն օրինակներ են մեր առջև: Այն տեսներն ժողովուրդը ձիգուիթներուն անկումը կը պահանջէր, բայց այժմ Հրէայներուն է կարգը: Ամբողջ անոնց անկումը կ'ուզէ:

Նիւ Եորքի Օսմ. Հիւպատոս անուանուած է, Մալուժաթ լրագրի խմբագիրներէն, Մուսէճի Պէյ:

Սով կայ Իտալիոյ մէջ. հացը շատ սուղ է. ժողովուրդը ցոյցեր ըրաւ այս մասին, ու կառավարութիւնն 10,000 զօրք ևս ղէնքի տակ կանչեց: Անօթի ստամոքսները լեցնելու այս նոր միջոցը զարմանալի է յոյժ:

Պ Ա Շ Օ Ն Ա Կ Ա Ե Հ Ր Ա Ի Բ

Նիւ Եորքի և Երջակայից Հայ Տիկիներուն և Օրիորդներուն

Յարգելի Մայրեր և Գոյրեր,

Հայոց «Տիկնայք փափկասունք» ամէն ժամանակ ու ամէն տեղ մասնակից եղած են մեծ գործերու: Հինգերորդ գարուն մը Հայ Գրիտանիական հասարակ գոյութիւնը պաշտպանելու համար՝ ամենէ մեծաշուք իշխանուհիներէ սկսեալ մինչև յետին գեղջիկներն, զուգեցին ամէն վայելք: Այսօր Ազգային գոյութիւնը ու ապագայն պաշտպանելու համար է որ կը հրաւիրուիք զձեզ զոհել մի քիչ ժամանակ ու մի քիչ անհաստական յարաբերական հաշիւներ:— Որքերն են որ այսպէս կը պահանջեն, զի ազգային գոյութիւնն ու ապագան անոնց սարկէն ու լաւ կրթուելէն կախեալ է:— Նիւ Եորքի ու Երջակայից Տիկիներն ալ պարտաւոր են իրենց բաժինը ունենալ այս կենսական գործի մէջ: Յառաջիկայ Հինգերորդի, Փետր. 10 կէս օրէ վերջ, ժամը 2ին կը հրաւիրուին Նիւ Եորքի և Երջակայից բոլոր Հայ տիկիները՝ առանց իտրութեան դասակարգի, կրօնական և այլ համոզմանց՝ Ս. Ոսկերեան Եկեղեցոյ ժողովարանին, 39րդ փողոց 7րդ աճիւլ, ուր անձամբ ներկայ գտնուելով պիտի ներկայացնեմ Հայուհեաց որբախնամ Ընկերութեան մը ծրագրերը: Իմ գտած հասցէներու մասնաւոր հրահանգները զրկած եմ, իսկ որոնք որ չեն ստացած այդպիսի հրահանգ, խնդրեմ որ ներողամտ գտնուին, այս հրատարակութիւնն ընդունին իբր հրահանգ:

Հրաւիրելով Նիւ Եորքի ու Երջակայից-Պրուքլինի, ձէրգրի եւն. բոլոր Հայ տիկիները

Մնամ ազօթարար ՄԱՇԹՈՅ ՎԱՐԴԱՊԵՏ

ԱԶԳ

Բարեսիրաց Ընկերութիւնն կը փափաքի ծանուցանել թէ վաղը Ս. Պատարագէն վերջ պիտի խօսին բացի պատարագից Ս. Հօրմէն, Պատուելիք Յակոբեան, Սաղոյեան, Եւզանան և Հայկուներ, 23րդ փողոցի Եկեղեցին մէջ:

ՈՐԲԵՐՈՒՆ ՍԻՒՆԱԿԸ

ՉԼԻՆԻ ՁԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՅ ՅԱՆԱՊԱՏԻ

Թիւ 11 ՏԻԳՐԻՍԻ առաջնորդողը մինչև հիմայ հրատարակուածներէց ամենալաւն էր, իր նիւթի և արտաշայտած հայեացքների կողմից:

«Որբմութիւն արէ՛ք, պարոն, անհայր, անմայր, Հայ որբերուն.»

Իսկապէս կ'ան այսօր հազարաւոր անհայր, անմայր, որբեր անօթի, անպաշտպան մնացած մեր արիւնշաղաքի մայրերիցում, իրանց մարտիրոսացած ծնողների գիւղերի շուրջը. իրան է, կարելի է հաւատալ, որ սորանցից շատերը ձեռք են կարկառու գէպի իրանց ծնողների սպաննիչը, գէպի արիւնշաղաք գայլերը, մերկութիւնը մի կողմ ձգած, բնական պահանջը քաղցածութիւնը յազնցնելու, թէև չըբիտեն գայլի ունից մի բան չի դուրս գալ: Ի՞նչա է, որ նորանցից շատերը, կարիքից ստիպուած, պիտի գիւղեր իրան իրաւում ձգած, եւ զբաղղարար ամեն ինչ իրաւ և հաւատալի է. Բայց արդեօք այդ կենդանի զոհերը կարող են մտածել, որ հեռաւոր երկիրներում, իրանց մարտիրոսացած ծնողների արիւնշաղաք այլ ծնողների իրանց հասակակից զաւակները իրանց կացութիւնից բոլորովին տարբեր կացութեան, աներեկայելի երջանկութեան, բարեկեցիկ կեանքի մէջ են գտնուում . . . :

Նորանց թշուառութիւնը երկարօրէն նկարագրելու կարիք չկայ. երջանիկ հարուստներ, քանի որ այս մասին գրաւոր և բերանցի շատ էք լսել, եթէ մի րոպէ ձեր զաւակները, ձեր սիրելիները նորանց տեղը երեկակայէք, այն ժամանակ, եւ կարծում եմ կրտսեպուիք ճշմարիտ ձեր վեճը որ տակաւնութիւնը գէպի սնկայր, անմայր թշուառ որբերը՝ ժամանակը անողոք է և իր մանկալը սուր եթէ վրանուք ժամանակին ձեր պարտք կատարելու, կորած են մեր ապագայի յոյսերը, մեր ուժերը, և դուք յաւիտեան պատասխանատու կը մնաք ազգի առաջ, իսկ ձեր կարողացածները կըլինին «ձայն բարբառոյ յանպատիւ»:

Փետր. 1 ԵՆԵՐԵՐԱ

Խմբագիր, Անցեալ առաւօտ տղաւ Ս. Փաշաղանի զարոց մեկնած ժամանակ սենթ մը ուզեց խնձոր մը առնելու համար. նոյն միջոցին քովս կանչեցի զինքը և կարդացի ՏԻԳՐԻՍԻ մէջ որբերուն նկատմամբ գրուած յօդուածը, որ կը խրախուսէր ամեն Հայ անհասարկ մասնակցիլ այս նուիրական գործին:

Երբ յօդուածին ընթերցումը լըմընցաւ ու ինքն ալ հասկցաւ խնդրին մեծութիւնը, խիտ զգածուելով որբերուն տաժանելի վիճակէն, խոստացաւ ինձ այլևս խնձոր կամ շաքար առնելու տեղ՝ ստակ խնայելով եօթնեակ մը կազմել, սակայն քաղաքիս մէջ ազգայնոց թիւը խիտ սակաւութիւ ըլլալուն համար, յարմար սեպեցինք Նիւ Եորքի կամ Երջակայ Հայ մանկանց հրահանգ կարգալ:

Ուստի Հայաստանի խնդ ու անպատասպար որբերուն փրկութեան Ս. գործին մասնակից ըլլալու փափաքող 6 մանուկներ թող հանին իրենց ծնողաց միջոցաւ գիւղը ձեր լուրբազորութեան, որպէս զի անմիջապէս եօթնեակ մը կազմելով՝ ազատեն թշուառութեան ճիրաններէն իրենց եղբայրներէն մին, որ թերես ապագային Հայուն փառքերէն մին ըլլայ:

Կը մաղթենք որ բոլոր Հայ մանուկներն իրենց լուժանքը խնայելով, մատաղ հասակուն վարժուին այս պիտի բարեգործութեանց, ու օրինակ հանդիսանան իրենց յաջորդ սերունդեան ևս:

Ես ալ, վերոյիշեալին հայրը, պատասխան եմ եօթնի մը անդամ ըլլալ եթէ կրնաք վեց հոգիներ ևս գտնել «եօթն», մը կազմելու համար: Մենք պատասխան ենք, հայր ու տղայ, վճարելու, երբ ստակ զրկելու տեղը յայտնէք:

Յ. ՓԱՓԱՉԵԱՆ

—Պիշուք Փոթըր Տ. Մաշթոյ վարդապետի և Աղբ: Հոգարարձութեան ատենապետին հետ անցեալ Ծաբաթ երեկոյ խօսելով Հայ որբերու մասին, և լսելով Հայոց կողմէ եղած ջանքերն զանոնք փրկելու համար, խոստացած է ոչ միայն բարոյապէս, այլ և նիւթապէս օգնել այս ազգաբնիկ ձեռնարկին:

—Պ. Կարվանեան որ 3րդ ամիսի վրայ ճաշարան մ'ուներ, այս շաբթուոյնէ սկսեալ ճաշարանէ ըրած շահուն հարիւրին երեքը՝ որբերուն պիտի յատկացնէ:

—Պ. Երկանեան ընտիր իւղաներկ մը նուիրած է Հայ որբերուն ինպատ վաճառուելու համար: Իւղաներկն Տ. Մաշթոյ վարդապետի յաճուկեցաւ:

—Վերջի պահուստացած ենք որիչ թղթակցութիւններ, նորանոր եօթներու կազմութիւնն աւետող, այլ և այլ քաղաքացի մէջ: Կը հրատարակենք զայնս յաջորդ թուով:

Մ Ա Ն Ր Ա Լ Ո Ի Բ Ք

—Արժ. Մաշթոյ վարդապետ, անցեալ շաբաթ երեկոյ Տ. Թաւաշեանի հետ միասին այցելեց զՊիշուք Փոթըր: Եպիսկոպոսը սիրով ընդունեց ու յարգեց իր այցելուները: Նորին Գերապատուութիւնն հաճութիւնն ցոյց տուած է մի այնպիսի եկեղեցի դնել: Հայոց արամալուրութեան տակ որ կարելի ըլլայ գործածել զայն ո՛ր է ժամանակ:

—Վաղը Արժ. Տ. Վաղինակ վարդապետ Ս. Պատարագ պիտի մատուցանէ 23րդ փողոցի Եպիսկոպոսական եկեղեցւոյն մէջ, Բարեգործական Ընկերութեան հարկերուն:

—Հայ Տիկին մը 25 կտոր ընտիր ասեղնագործներ, որոց մէջ 5 սուլարէ մինչև 25 սուլար արժէք ունեցողներ կան, վիճակահանութեան գրուած է 250 հատ՝ իւրաքանչիւրը 1 սուլարոց տոմսերու փոխարէն: Վիճակահանութիւնն տեղի պիտի ունենայ ամսոյս 24ի երեկոյին, ի թիւ 220 իսթ 23րդ փողոց: Այս վիճակահանութեան եկամուտին հարկերն 20ը պիտի յատկանայ Բարեգործական ընկերութեան:

—Տ. Գարակէօզեան ըսած է թէ ինք կը խոստանայ տարին որոշեալ գումար մը տալ Բարեգործ. Ընկ. պայմանաւ որ իրեն դիմող բոլոր Հայ ազգասիրտներն նոյն ընկերութեան զըրկէ՝ փոխանակ առանձին առանձին օգնելու անոնց:

—Անցեալ Կիրակի երեկոյ ազատ լսարանի ժողովին մէջ խօսեցան Տիարք Բագրատունի, Զիթեան և Զըպուզեան:

—Պատ. ձէնանեան, որ ծանօթ է մեր հին գաղթականութեան, անցեալ Կիրակի օր քարոզեց 23րդ փողոցի եկեղեցւոյն մէջ, Տա կերէն լեզուով:

—Պ. Տիգրան Շիւմանեան, քանի մը շաբաթ է ի վեր անկողնոյ կը ծառայէ: Կ'ըսուի թէ երիտասարդին վիճակը բաւական ծանր է այս օրեր:

—Ըստ թիւ անտ Գաֆանի ըրպնի գործարարը (130րդ փողոց, Ամբիէր տամ ամիսի մօտ) ժապաւէնի (րիպլըն) գործաւոր կ'ուղուի: Նմանապէս Բօլէճ ֓ Փօյնի Օփէնչէյմ գործարարն այս օրեր ոտասայնակներու (ուրվըր) կը կարօտի:

—Կիրակնօրեայ ազատ լսարանի գումարումն տեղի պիտի ունենայ Կիրակի երեկոյ ժամը ճիշդ 7.30ին Զիթեանի Բարեգործ. Ընկ. մէջ. 57 Ուէսթ 25րդ

Փողոց, վեցերորդ Ամիսի անկիւնն:

Պ. Թ. Չարչաֆեան պիտի խօսի նիւթ ունենայով «Մարդը, անոր ըսկիզբն ու ծննդավայրը»:

—Հայք գրական հանդիսին մէջ «ամուսնութեան ինքիւրը» վերնագրով և «Հայ երիտասարդները աղջիկ կը փնտնեն ու չեն գտներ, ի՞նչ է ճարը» ստորագրեցողով յօդուած մը հրատարակուած է, որով պատուարժան խմբագրութիւնն «առանց ամուսնական գործակալութիւն մը կազմաւորելու» հրահրեց կը կարգայ ամուսնանալ ուղղը երիտասարդաց և երիտասարդուհեաց, որ իրենց տարիքը (?), ծննդավայրը, գործը, զեղեցկութեան աստիճանը և այլ շատ մը մանրամասնութիւններ տեղեկագրեն «անմիջապէս» իրեն, որ աշխատի «Գիւրութեան հնար» մը գտնել: Այս տեղեկագրութեանց հետ երիտասարդք պիտի զրկեն կէս տոլար ՄԻԱՅՆ, իսկ երիտասարդուհիք ազատ պիտի ըլլան ո՛ր է ատարբէն (!):

—Փիլատէլ ֆիոյ ծանօթ ազգայիններէն Տ. Բագրատունի քաղաքս կը գտնուի, քանի մ'օրերէ ի վեր:

—Տ. Ս. Մէտուեան անցեալ օր Սըմըթի մէջ երկու իտալացիներու հետ քալած ժամանակ կառքի մը տակ մնացին: Իտալացիներն ծանրապէս վիրաւորուեցան, իսկ Տ. Մէտուեան բարեբաղդութիւն ունեցած է թեթեւ մը վնասուիլ:

—Թրոյէն պատահական թղթակցի մը՝ Տօնիկ՝ կը գտնուար թէ է, տեղւոյն Հայոց մէջ ալ «եօթն» երկան, քայո ոչ որբեր խնամելու, այլ թող խաղալու, խմելու և այլ աննախանձելի գրօսանաց համար:

—Տ. Պոյաճեան Լօրէնայն կը զրէ մեզ Յունի. 31 թուականաւ Երէկ երեկոյն տեղի ունեցած լսարանին մէջ Տքթ. ձէլալեան հիմնովին հերքեց Տիգրիսի նախորդ թըւաճամարում Հրանտի իւր մասին գրածը, և զարմանք յայտնեց. կարգաց նաև իւր գրաւոր պատրաստած ձառք, որ կը խօսէր հին ազգաց պատմութեան մասին. ձառք խնամով պատրաստուած էր, բայց ցաւալի էր որ քիչեր ներկայ էին:

—Այս երեկոյ նարակազմ Հնչակեանները ընդհանուր ժողով ունին:

Հ Ա Ն Ի Ե Ս Ի Ո Ի Ե Ս Թ Հ Ո Պ Ո Ւ Բ Ը Ն

Անցեալ Կիրակի տեղի ունեցաւ լսարանի ընդհանուր ժողովն ի Ուէսթ Հոպլըքն, 350ի շատ երկեսեւ բազմութեան մը ներկայութեամբ: Տ. Թ. Չարչաֆեան հանդէսը բացաւ հակիրճ նախաբանով մը, որուն յաջորդեցին Օրիորդք Սարաֆեան և Մըսրէան՝ կարգաւ արտասանելով Հայ. և անգլ. բանաստեղծութիւններ: Օրոշան ատենախօսն, որուն կապաւոր ժողովուրդն անհամբեր, երբ նախագահին կողմէն ներկայացուցեալ ներկայք բուն ծափահարութեամբ ողջունեցին զայն, որ կէս ժամի շատ աղբիւս ներկայ աղէտալից վիճակին վրայ իմաստալից տեսութիւն մը ըրաւ, վերջացնելով իւր խօսք մի ընդարձակ բանաստեղծութեամբ, որ խոր տպաւորութիւն ձգեց ունկնդիր ժողովուրդին վրայ: Գաղափար մը տալու համար նորեկ ատենաբանի ճարտարաստութեան մասին, բաւական է ըսել թէ Տ. Չարչաֆեան Հայ Ամերիկեան խօսողներու մէջ առաջնակարգ տեղ մը կը բռնէ իրաւամբ, եթէ չէ անմեծամարտարախօսը:

Հանդիսին մէջ խօսեցան նաև Տիարք Զուլճեան, Տիոնեան, Էկիւնեան եւ այլք: Փակումէն առաջ եկեղեցւոյ շինութեան ի նպատ բացուած հանգանակութիւնն շարունակուելով 150 տոլարի շատ գումարուեցաւ նուիրատուաց ցանկին վրայ:

Ը Ն Ի Ե Ս Ի Ո Ւ Թ Ի Ն

Պոսթոն, Յունի. 18.

Ես չեմ հաւատար երբէք՝ թէ ո՛ր է հեռատես և շրջապայաց մի Հայ օգտակար պիտի դատէ Ամերիկայի մէջ Հայկական եկեղեցի մը կանգնելը:

Բացատրեմ միտքս: Ա. Ամերիկայի 15,000 Հայ դաղթականութիւնը դեռ չ'կրցաւ իւր միակ եկեղեցին — Ուսթրի մէջ — ազատել 3000 թէ 6000 տոլար պարտուց ծանրութենէն, մինչդեռ Ուէսթ Հոպլըքն մեր կրօնասէր Հայրենակիցները՝ իրենց այս անխորհուրդ ձեռնարկովը կ'ուզեն հազարաւոր տոլարներու նոր բեռ մ'աւելցնել Հայ դաղթականութեան վրին վրայ:

Բ. Այնպէս ընդունել թէ Ուէսթ Հոպլըքն Հայ ժողովուրդը կը վստահացնէ մեզ թէ իւր հանգանակած գրամին համեմատ պարզ եկեղեցի մը պիտի կառուցանէ առանց աւելորդ փոխառութիւն ընելու: Այդ եկեղեցին կառուցանելու խորհուրդը հրացողները, և նոյն իսկ զանոնք քաջալերողները առիթ և պատճառ պիտի դառնան գաղթականութեան մի ահագին հոսանքի ևս տեղի տալու, ինչպէս որ արդէն Ուսթրի մէջ կառուցուած առաջին եկեղեցին ալ իր մեծ դերը ունեցած է Հայ գաղթականներու շարունակ զէպի Ամերիկայ ուղղուելուն:

Գ. Ինչպէս չ'ի լսելք 70—80,000 անաչոր ու անպաշտպան որբերու ողբոյ ու հեծկլտանաց ձայնն ու հառաչանքը՝ փոխանակ անոնց վրէտերն ու ցաւերը սփոփելու, երբ այդ արեան դին եղած զբաղմանով եկեղեցի կառուցանենք, թշուառ ու անպաշտպան մանկիկներն սովամահ կորսուելուն պատճառ կը դառնանք:

Ասկէց զրեթէ եօթն տարի յառաջ Պօլոյ բերայի կողմը կը կառուցուէր Հայ-ազգային մի եկեղեցի և անոր կից մի բարձրագոյն վարժարան. ճիշդ այդ միջոցներուն էր, որ Նորին Ս. Օծու թիւն ամենայն Հայոց վեհախորհրդը կը գտնուէր ի Ս. Երուսաղէմ իւր քաղաքական. չեմ գիտեր թէ ինչպէս, այս տողերը գրողն ալ նոյն ատեն Ս. Երուսաղէմ գլուխուկով բարեբաղդութիւն ունեցաւ երբեմնակի տեսութիւններ ունենալ Նորին Սրբութեան հետ: Օր մը երբ հարցուցի իրեն թէ «Հայրիկ, լաւագոյն ձէ՞ր լինի, որ Հայաստանի մի քանի նշանաւոր կեղծողներու մէջ Հաստատէինք այս բարձրագոյն դասի վարժարաններն»:

Նորին Ս. Օծու թիւնը յիշեցնելով ինձ՝ այն նշանաւոր հարուստ ազգայինը, որ ի Բերա կառուցուած եկեղեցւոյն և վարժարանի ծախքը ամբողջովին ինք կը հոգար, ըսաւ թէ «Երբ ես Պօլիս կը գտնուէի, կարելի է տեսնէն աւելի անգամներ անձամբ տեսայ ... էֆէնտին և ջանացի համողի, որ այդ վարժարանի կառուցման համար ընելիք ծախքովը իր Հայրենիքի մէջ կառուցանէ ալ աւելի ընդարձակ և բազմաճիւղ վարժարան մը, որպէսզի իւր Հայրենեաց մանկտին օգտուի. և մանաւանդ, կը ըսէր ն. Օծու թիւնը, շարունակ կը շեշտէի թէ Պօլիսը մեր անձնական տունը չ'լինելով, օր մը պիտի թողուր օտարը օտարին, և մենք պիտի երթանք մեր Հայրենի տունը. ուստի լաւագոյն է որ մենք զարդարենք աւելի թէ Պօլիսը մեր անձնական օր մը թողուլ օտարին»:

Ա Ր Շ Ա Լ Ա Յ Ս Ա Ր Գ Ի Ո Ս Ի

—Հայրիկ, այս երկրի կրկնը կերելի թէ ջաղացներու մէջ կը գործեն ինչէ՞ն գիտես.

—Երեսները լեցուն ալիւր է.

—Ասիկայ զեղեցիկ երեւնալու միջոց մէ, աղաս:

Ս Ո Ւ Ի Ն

Հ Ա Յ Գ Ի Պ Ս Ա Ս Ս Ս Ա Ն Ը

Մշակի մէջ Նիւ Եորքի Հայք թերթի լեզուին և ուղղութեան մասին ըրած մի քանի դիտողութիւններս շատ յուզած կ'երևին այդ թերթի գիւրագրի խմբագիրը: Չայրացած գրագէտը իր թերթի երկրորդ թուով մի յօդուած հրատարակած է, որոյ մէջ այնքան յայտնի են վիրաւորուած անձնատիրութիւնը և բարկութիւնը, որքան որ անկից բացակայ են ճշմարտութիւնը և արամառնութիւնը:

Նախ յարգելի Պարոնը չարաչար կը սխալի զիս նազար բէկի վրայ ըսածանշացողներէն կարծելով: Հնչակ-Ապտակի խմբագիրը ինչպէս ամեն Հայու, նոյնպէս և իմ զգուշանաց միայն արժանի է: Եթէ Հայքը իր ըսածին նայելով, այդքան երկարատև և յարող պայքար մը մղած է ինձ ատելի անձի մը դէմ, պէտք էր որ ուրեմն Հայքի պաշտողներու մէջ ըլլայ: Թող ուրեմն Պ. գրագէտը իր բեղմնաւոր երևակայութեան մէջ իմ անձնական թշնամութեանս (?) ուրիշ պատճառ մը գտնէ. նոյն ատեն ես հիմա պարզեմ իմ ըսածներս:

Թէ Հայքի լեզուն, անհետեւ խառնուրդ մ'է՝ գրաբանի և աշխարհահարաւոր, որ ոչ մին և ոչ միւսը կողուելու արժան է, այդ ամենուն ծանօթ է: Հայքի մտերմութիւնը կը ճանչնամ մ'արդիկ որ նոյն դիտողութիւնը իրեն ըրած են անձամբ: Այդ Բարեկրեան լեզուին վրայ զազափար մը տալու կը բաւեն Հայքի ընտիր Հայերէնի հետեւեալ նմոյշներն:

Առաւօտուն վաղ կը յառնէ յանկողնոյ: — Ի շնորհիւ և յԵփրատու եմ մեծագանձ և բարձրագոյն Հայրենակիցներ: — Այդ դոյն խնդիր եօթներեակ յառաջագոյն Պատ. Կիրիի Հետ խորհրդակցութեամբ ի ընդհանուր անձամբ էր — Հէգ պատանին ընդ հառանիլն ի տուն կը մեռնի:

Փափաքելի էր որ Պ. խմբագիրը իր գրաբանի խորին հմտութիւնը ցոյց տալու համար մի ընդարձակ առաջնորդող գրէր, իր Հայ և Ամերիկացի բարեկամաց ու բարեկամութեանց վերաբերեալ հաստատար զայն, որ ամենս հաւատարմեցնէ, և այսպէս Հայ լեզուն և Հայքի ընթացողները ազատէին այս բժշկական շարքարանքէն: Եթէ ամեն գրագէտն նոյն շարժառիթով իր գրացած գրաբան ոճերն միացունեն աշխատի աշխարհահարաւոր մէջ «ուրեք գրաբանի ուրեք գաւառաբարրաններու մօտեւայ», ինչ պիտի ընենք մենք հասարակ մահկանացուներս որ ոչ «ուսեալ ազգայինք» ենք և ոչ ալ «Ազգային պատկառելի խորհրդագրութեան մը գլուխը»: Ինչո՞ւ համար Մամուրեանի, Զիլիկիի և Իւթուճեանի, Նուպարեանի պէս քերագէտներ աշխարհահարաւոր կը գրեն իրենց գաղափարներն հասկնելու համար գրաբանի օգնութեան չեն դիմեր, նոյն իսկ ամենէն ընտիր մասեղագիրներն կը թարգմանեն այդ պարզ լեզուով. միթէ յիշեցնելու երկասիրութեանց և թարգմանութեան ընդարձակ հաստատարն 8 երեսնոց ամսաթերթէ մը աւելի առիթ չ'էին տար արդի հայերէնը հնոյն մօտեցնելու, եթէ հարկը պահանջէր:

Սակայն լեզուի խնդիրը չէ որ այնքան զարթացուցեր է մեր գաղաւթ խմբագիրը, Հայքի ուղղութեան քննութիւնն է որ դիմեց յուզեր է: Որքազիր է թէ ինչո՞ւ Հայք իր ուրիշ տարուան դոյնութեամբ չէ կրցեր ժողովրդական դառնալ, ստիպուած է եղեր մ'ըտ հասարակութեան գլխութեան դիմել «փութացէք, Հայ երիտասարդներ փութացէք», կրկնել ողորմագին: Ամերիկայի 10,000 գաղթականաց միակ թերթին էր Հայքը, շատ երկար ատեն առանց մրցակից մ'իսկ ունենալու, սակայն այդ սիրելի և օգտակար հանդէսը չը կրցաւ տեղ մը գրաւել ժողովրդեան սրտին մէջ: Տիգրիսի ու Եփրատի շարժառիթները մի քանի ամսուան մէջ աւելի տարածուեցան և նիւթական հաստատ հիման վրայ դրուեցան, քան Հայքը մի քանի տարուան միջոցին: Կրկնա՞յ Տր. Գարբէլեան այս տարուան երկոյթը բացատրել իրմէն առաջ, թող ներքէ որ իմ տպաւորութիւնս յայտնեմ:

(Շարունակելի) Ա Ր Մ Ե Ն

ԸՆԴՆՈՒՄ ԱՆՈՍՈՒԹԻՒՆ

ԱՇՈՏԻ ՏԱԳՆԱԳԸ

Խմբագրութիւն ՏԻԳՐԻՍԻ
ՏԻԳՐԻՍԻ 11 համարին մէջ կարգադրեց Պօսթօնի Տագնապը, վերնագրով նամակ մը, Աշոտ ծածկանունան տակ:

Ըստ Աշոտի հասկացողութեան՝ իբր թէ ես Եպիսկոպոսականներու Երէջքին սպառնացեր եմ «Եկեղեցափոխ ըլլալ»:

Եթէ մէկը հարցնէ Աշոտին՝ թէ փոշոտ աչքերդ տեսնան այդ գրուած նամակը՝ ի՞նչ պիտի պատասխանէ: Անշուշտ պիտի ըսէ՝ Ո՛հ: Ուստի, աղնիւ ընթերցող, ես պատմեմ իրողութիւնը և դու բաղդատե՛մ վերի բացարձակեան հետ:

Ս. Ծննդեան տօնի օրէն հազու 4-5 օր յառաջ էր, որ ուզեցի անձամբ տեսնել Արթ. Երէցը և վերջնական պատասխան մը ստանալ:

Ս. Ծննդեան տօնի օրէն հազու 4-5 օր յառաջ էր, որ ուզեցի անձամբ տեսնել Արթ. Երէցը և վերջնական պատասխան մը ստանալ:

Ս. Ծննդեան տօնի օրէն հազու 4-5 օր յառաջ էր, որ ուզեցի անձամբ տեսնել Արթ. Երէցը և վերջնական պատասխան մը ստանալ:

Ս. Ծննդեան տօնի օրէն հազու 4-5 օր յառաջ էր, որ ուզեցի անձամբ տեսնել Արթ. Երէցը և վերջնական պատասխան մը ստանալ:

Ս. Ծննդեան տօնի օրէն հազու 4-5 օր յառաջ էր, որ ուզեցի անձամբ տեսնել Արթ. Երէցը և վերջնական պատասխան մը ստանալ:

Ս. Ծննդեան տօնի օրէն հազու 4-5 օր յառաջ էր, որ ուզեցի անձամբ տեսնել Արթ. Երէցը և վերջնական պատասխան մը ստանալ:

Ս. Ծննդեան տօնի օրէն հազու 4-5 օր յառաջ էր, որ ուզեցի անձամբ տեսնել Արթ. Երէցը և վերջնական պատասխան մը ստանալ:

Ս. Ծննդեան տօնի օրէն հազու 4-5 օր յառաջ էր, որ ուզեցի անձամբ տեսնել Արթ. Երէցը և վերջնական պատասխան մը ստանալ:

Ս. Ծննդեան տօնի օրէն հազու 4-5 օր յառաջ էր, որ ուզեցի անձամբ տեսնել Արթ. Երէցը և վերջնական պատասխան մը ստանալ:

Ս. Ծննդեան տօնի օրէն հազու 4-5 օր յառաջ էր, որ ուզեցի անձամբ տեսնել Արթ. Երէցը և վերջնական պատասխան մը ստանալ:

ՀԱՅ ԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱՅԻՆ ԵՐՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն)

Վերի խօսքերէն կը հասկցուի թէ եթէ Լօնտոնի թերթն չը գրէր թէ, «թող երթայ նա իւր ճամբով» ո՛չ վանի, ոչ Պօլսոյ, ոչ Ալիսայ, և ոչ Եւրօպայի կոտորածներն տեղի կ'ունենային:

Իրաւարանութեան Փրօֆէսորներն անգամ այդքան սքանչելի տրամաբանութիւն չէին կարող ընել: Միայն կը ցաւինք որ այս փաստարաններէն և ոչ մին բարեբաղդութիւն ունեցաւ դարուս սկիզբներն ծնանելու, որպէս զի հաճէր մեզ ասել թէ ո՞ր մի թերթի գրածին պատճառաւ Շարիֆ Պէյն երեսնական թուականներուն Բաղդոյ մէջ իւր նախնորներ կը գործէր—կ'սպաննէր, կը կախէր և կ'ընէր զոր ինչ կամէր:

Յիսուսական թուականներուն Բատրիսան Բէյն կը տիրէր ամբողջ Մոկաց լեռներուն, նորա էր Հայու վաստակէն, նորա էին Հայու կոյսերն: Նորա եղեռնագործութեանց ասպարէզն Վանի լճակն կտրելով կը տարածուէր նաև Ախլաթի գաւառի վրայ: Ի միջի այլոց յիշենք մի պատմական դէպք, նորա գործոց մասին մի գաղափար տալու համար:

Մի օր Բաղդոսն Պէյն՝ յիսուն քիւրս կը խրկէ Ախլաթի Մշակ գիւղըն, ուր նորա յանուն Պէյի կ'սպաննէր ան ըստ մ' Հայեր, կը կողոպտեն գիւղը և ի վերջոյ կը բռնեն յիսուն Հայեր, կը կտրեն նոցա սկանջներն ասելով թէ «Պէյն ուզեց որ իրեն նըւէր տանինք յիսուն զոյգ «Փլայի աւանդ»: Տասնայնից տարի առաջ անձամբ տեսայ այն անականդ դժբաղդներէն մին, ու թուումեայ ծերունի մը որ աղէխարչ կերպով պատմեց եղած խժժութիւններն: Վախճանական թուականներուն՝ հանրածանօթ Մուսա Պէյի Հայրն՝ Միքայ Պէյ, Մշոյ դաշտի աւերիչ ոգին դարձած էր, ջարդեց Հայեր թուով անհամար, վառեց գիւղեր, որոց տեղերն դեռ ևս վկայ են: Ասիկ ընական հարցն կելլէ թէ Տրապիզոնի մէջ ո՞վ արձանակ պարպեց, որ այս դէպքերն տեղի ունեցան: Պատմութիւնը և կենդանի վկաներ մեզ կը պատասխանեն թէ, ո՛չ ոք: Արդ կը հետեի թէ Հայաստան արեան ծովը եղած է յորմէ հետեւ Օսմանցիք տիրեցին մեր երկրին՝ և թէ կոտորածներ անընդհատ տեղի ունեցած են մերթ քերչ և մերթ շար թըւում: Դեռ մոռցուած չեն Պայազլիսի՝ Ալաշկերտի և Վանի կոտորածներն, Ռուս և Թրքական պատերազմի ժամանակ:

Վերջին զարդերն կը տարբերին առաջիններէն միայն սա տեսակէտէ որ Թուրք կառավարութիւնն, մասնաւոր խնամով և յատկապէս զպատրաստած էր զայն կանխաւ: Եւ ասոր պատճառ կար: Թէ ի՞նչ էր այս պատճառն—որպէս վերև յիշեցի Հայն, յորմէ հետեւ Օսմանցոց հպատակ դարցած էր, կը կեղեքուէր, կը հալածուէր և կը մորթուէր անխնայ: Այս երեւոյթներն երթալով պաշտօնական ու կանոնաւոր ձև կ'առնէին: Գիւրտ Պէյերու վրայ կ'աւաղեային և Թուրք պաշտօնեաներ, սկսեալ Փաշայէն մինչև ամենահետեւեալ զարիթիէն: Հայն այլևս չէր կարար տանիլ. բողոքեց մարդասէր կարծեցեալ Եւրոպայի, և խնդրեց որ կենաց, պատուոյ և ընչից ասպնդութիւն տրուի իրեն: Եւրօպայ չ'ընել ձևաւոր. իսկ եղան անձինք, որպէս Մեծն կ'առաջարկէր, ոյք մասնաւոր ըրին զՅոյն և զԲուլղարըն—«Հետեւեցէք նոցա շաւղին և ձեզ կը տրուի ձեր ուզածն» ասին:

Հայն ալ արդէն եկած էր այն համոզման թէ իր անց արեան չ'իւր կողմէն թուրքներն չ'ուր լինեն: Ա. Ս. Ղեկնաբան (Ինքնակերպ յաջորդ թուով)

ՊՕՍԹՈՆ

Պօսթօնի Հ. Բ. Գրադարանի ընկերութեան ժողովը տեղի ունեցաւ ընդ ասենակալութեամբ Պ. Օսկան Աթէշեանի և առաջնորդութեամբ Օր. Ալիս Պլաքուէլի, Յուն. 22ին, գրադարանի ընդարձակ սրահին մէջ:

Ժամը 8 ին Օր. Պլաքուէլը քաղաքի ժողովը հակիրճ յառաջարկով մը երկուսեւ բազմութիւն մը գրաւած էր սրահի մեծ մասը, ժողովականները անձկութեամբ կ'ապաստին խօսողներուն: Երբ արդարեւ ատենախօսութեան արուեստին անձանօթ երկու պարոններ, իրենց արհեստը չըբացող սափրիչներու նման, մեր գլուխներուն վրայ բառախաղութեան անառջ փորձեր կատարեցին: Գովելի բան է համարձակ ըլլալ, բայց այլոց ժամանակի կորստեան մէջ մի փնտռէք պատրի փառքը: Վերջին ատենախօսան էր Պ. Արսէն Տաղմաճեան, որ սահուն, սիրուն ոճով մը իրեն յատուկ շարժումներով, բացատրեց իր գաղափարները, որոնց մէջ մասին թէ և անհամաձայն եմ, սակայն արժանի էր խօսողը ունիզութեան: ՎԱՐԴ ՎՐՈՅՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՇՄԱՐԱՆ

ԽԱՉԱՍՈՒՐ ԿԱՐՎԱՆԵԱՆ 388 Յրդ. Ալիւ Նիւ Եորք
Շահուն հարիւրին երեքը պիտի յատկանայ Հայաստանի Ռթերուն: Պատիւ ունիմ ծանուցանել թէ նոր կարգադրութեամբ ճաշարանակի տի գոհացուէն ամէն յաճախորդներ: Ապարիկ չենք տար, որովհետև մեր գները շատ ատան են: Պատ—նախաճաշ, օրը 3 պնակ կերակուր \$1.50: Նախաճաշը հաւկիթով \$1.80: \$3.50ի թիւքթիւք \$2.50ի կերակուրներու պնակը 10 սէնթի: Անգործ և կարօտ անձերու պատուը \$1.25 կը հաշուենք: Ծաշարանի գիշեր միջին և ժամը 12 բաց է:

Հ Ի Ր Զ Օ Լ Ա ՄԱԶԻ ԴԵՂ

Կը գործնէ, կը մաքրէ, կը փոշիացունէ մաքրելու թափելը կը դադարեցնէ: Կը բուժէ նաև մորթի հիւսնը: Միանգամ փորձել ըստական է սա զեղին արժէքը զիտնալու համար, որ արեւելեան խոտերէ պատրաստուած է յոյժ հաճելի միջոցով: Կը ծախուի Եւրոպայի գեղագործներուն զով: Գին 50 Սէնթ միայն: Կարելի է ստանալ նաև Հայկական գեղարանէն— ի թիւ 472 Յրդ Ալիւ, Նիւ Եորք:

ԲԻՐՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳԻՏԱՐԱՆ

Գերբող Տպագրութիւն
Մաքրուէլ ԱրմըրԼԼԸ
Հրատարակիչ
Կը բաղկանայ 25 մեծադիր հատորներէ, որք կը վաճառուին բաժանորդագրութեամբ միայն: Սոցա գինն է, կտուկայ կազմ՝ 62 տող՝ 50 սէնթ, կտուկայ կազմ՝ 87 " 50 " փառակազմ՝ 100 "

Առաջին տեսակէն կը զրկուի անոնց որք յանձն կ'առնեն վճարել ամբողջ 2 տարու 50 սէնթ: Երկրորդին ամբողջ 3 տարու 50 սէնթ, իսկ վերջինին՝ 4 տարու: Այս Հրատարակչութեան Ամերիկեան միակ արտօնեալ տպագրութիւնն է: Գինը անկատար եւ ամեն կերպով: Մանրամասնութեանց համար դիմել Խմբագրութեան:

ՅՈՐԴԱՆԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԻԱՆ ԵՒ ՅԱԿՈՒԹ ԲԻՐ ԲԵԱՆ

ԶԱՇՄԱՐԱՆԱՏԻՍՐԻԲ
Թիւ 154 Իսթ. 27րդ Փողոց

Մեր գիներն քիչ մը բարձր են, վասնզի մեր կերակուրներն մաքուր են, ու գործածուած միսն ու բանջարեղէններն՝ թարմ և ընտիր: Մեր խոհարարը փորձառու արուեստագէտ մ'է: Ուստի ըրէք մարդուս կեանքին հետ գործ ունի, այս մասին խնայողութիւն ընելը գերեզման անպարելի կը նշանակէ: Կարժէ՞ քանի սէնթ խնայելու համար կեանքը վրտանի կ'էտարկել:

Այն Հայերն որ կը փափաքին իրենց Ամերիկացի բարեկամներն արեւելեան ճաշի հրաւիրել, այս ճաշարանն միակ վայրն է ուր կրնան գոհացում գտնել:

ՐԱՅՅԻՒՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շարունակում է բաժանորդագրութիւն
1. «Սամուէլ» Հատոր Ա. Բ. Գ.
2. «Գաւիթ-Բէկ» Ա. Բ. Գ. վերջնական

3. «Կայծեր» Հատոր Բ. Լիակատար
Երեք գրքերի բաժանորդագրին է միասին 12 շիլինգ (3 տարու): Ըստ տեսնելուց յետոյ մի Անգլ. ոսկի:

«Սամուէլ» արդէն մամուլի տակն է, և ըստ կ'տեսնէ Յունվ. ամսին: ՐԱՅՅԻՒՆ ՎԱՃԱՌԵԼԻ ԵՐԿԻՆԵՐՆԵՐ՝

1. «Խենդ և Զաւլէզդին» մի գրքի մէջ ամբողջութեամբ Գինն է 6 Շիլինգ
2. «Պաշապոյթ Յիշատակարանը» չորս մասերը մի գրքի մէջ ամբողջութեամբ 5 ու կէս Շիլինգ

3. «Վէպիկներ և Պատկերներ» Հատոր Ա. և Բ. 9 Շիլինգ
4. «Կայծեր» Հատոր առաջին (սակաւաթիւ) 4 1/2 Շիլինգ

5. «Պատմայի Մեկերութիւններ» 4 1/2 Շիլինգ
6. Չահրու մար Վէպ 5 1/2 "
7. Կայծերի կտակը 2 1/2 "

8. Մին այսպէս միւսն այսպէս, պատկերազարդ վէպ 2 Շիլինգ
9. Տաճկահայք

Բաժանորդագրութեան և վաճառելի գրքերի համար պիտի դիմել՝

Mme. Raffi
270 Uxbridge Road
Shepherd's Bush
London W.

ԵՂԲԱՐԲ ԱՒԲԱՀԱՄԵԱՆ

Թիւ 24 Պէք Սթրիթ, Փրովիտենս. Բ. Ա.

Փրովիտենսն մէջ վերջերս հաստատած ենք Արեւելեան Օղիի, Մասթիքայի գործարան մը. մեծ խնամքով կը պատրաստենք յիշեալ ըմպելիները:

Կուզանք խնդրելու ամեն Հայէ, որ եթէ ըմպելի գործածել ուզեն, փոխանակ օտար և անխորժ ըմպելիներ գործածելու, զի մեն մեզ և ըստանան իրենց վարժուած զուտ շամիչէ մաքուր օղի, իւր տեսակներով: Նաև եթէ փափաքին իբր Արեւելեան ըմպելի նուէր տալու բարեկամներու, ասոր համար պատրաստած ենք աղւոր ներմուծեալ փաթեթեղներով և կիթներով փակուած շիլինգ, խիստ պատուական տեսակէն. կրնաք այս շիլինգէն գնել և պէտք եղած տեղերն զրկել:

Կը յայտարարենք նաև թէ Ուաշինկթօնէն մեզ արուած է փաթեթեղ, ուստի կ'զգուշացնենք ուրիշ ծախողները:

Գիներ. \$3.00 1 կալըն. 90 Փրուֆ
\$4.00 " " 100 "

Ճ Ի Լ Ի Ը Ա Հ Ե Յ Ն

ՎԱՃԱՌԱԿԱՆ
Ծիխախոտի, առաջնակարգ սիկարի և Սիկարէթներու

Թիւ 592 Յրդ Ալիւ
Երեք քիչք